



ՀԱԻԱՏՔ

«Մի՛ երկնչիր, միայն հաւատա՛»:
(ՂԿԱ. Ը. 50)

Երկիւղիս ոսկարքում հաւատքը արտայայտուած է շեշտուած կերպով Ղուկասի Աւետարանի ութերորդ գլուխի վերջին համարներուն մէջ: Ան կը տանի մեզ դէպի հին հարց մը, որ, սակայն, կը շարունակէ մնալ այսօրուան աշխարհի մտահոգութիւններու կարեւորագոյններէն մին. ՈՐՆ Է ԻՐԱԿԱՆ ՀԱԻԱՏՔԸ, այն հաւատքը, զոր Քրիստոս պահանջեց այն բոլոր հիւանդներէն, որոնք դիմեցին անոր աստուածային զօրութեան:

Պարզ անհանգստութիւններու, ծանր հիւանդութիւններու, մինչև իսկ մահուան պարագաներու, մարդոց երկիւղին, յուսահատութեան կամ արցունքին դիմաց, մեր Տէրը կրկնեց շարունակ. ՄԻ ՎԱԽՆԱՐ, ՄԻ ՅՈՒՍԱ-
ՀԱՏԻՐ, ՄԻ ԵՐԿՄՏԻՐ, ԲՆԱԽ ՄԻ ԿԱՍԿԱԾԻՐ, ԱՅԼ ՄԻԱՅՆ ՀԱԻԱՏԱ,
հաւատա, հոգ չէ՛ թէ մանանեխի հատիկի չափ ըլլա՛ց հաւատքդ. ան բաա-
կան է լեռներն անգամ տեղափոխելու: Նոյնը ըսաւ մեր Տէրը այն ժողովրդ-
դապետին, որ եկած էր Անոր մօտ՝ հիւանդ իր աղջկան բժշկութիւնը խնդրե-
լու, ճիշտ այն պահին, երբ լուր հասաւ թէ աղջիկը աւանդած է արդէն իր
հոգին: Քրիստոս ըսաւ ժողովրդապետին. «Մի՛ վախնար, միայն հաւատա՛»:
Ապա ընկերացաւ ժողովրդապետին և կեանք տուաւ անոր անշունչ աղջկան:

Օտար չէ՛ մեզմէ շատերուն համար այն պահը, երբ, յուսահատած գի-
տութեան կարողութիւններէն, բժիշկներու միջամտութիւններէն, մեր աչքե-
րը կը դարձնենք դէպի անելի բարձր զօրութիւն մը, անոր գերբնական մի-
ջամտութիւնը հայցելու: Այդպէս ըրաւ ժողովրդապետը, այդպէս ըրին ու
կ'ընեն բազմաթիւ հայրեր ու մայրեր, երբ կը զգան թէ իրենց ձեռքերէն
դուրս կը սահի, կաթիլ առ կաթիլ, իրենց զաւակին կեանքը: Իրարանցումի,
վախի և յուսահատութեան ընդմէջէն, կ'արթննայ անոնց մէջ հին աղօթք
մը, մոռցուած հաւատք մը ու անոնք կը փութան Եկեղեցի, մոմ կը վառեն,
կ'ուխտեն, կը պաղատին, արցունք կը թափեն, վերստանալու յոյսով իրենց
զաւակը Աստուծոյ ողորմութենէն:

Թմբած պիտի մնար անոնց հաւատքը, դիմած պիտի չըլլային Աստուծոյ միջամտութեան, եթէ գտնուած չըլլային անելի մը առջև, ինչպէս ժողովրդապետը պիտի չերթար Յիսուսի մօտ, եթէ իր սովորական բժիշկը սպանած չըլլար գիտութեան բուրք կարելիութիւնները:

Հաւատքը կը սկսի խօսիլ, երբ կը լռէ գիտութիւնը: Ան վստահութեան մը արտայայտութիւնն է գերբնական ոյժի մը հանդէպ, որ կրնայ հրաշքներ գործել, ինչպէս էր ժողովրդապետին հաւատքը Յիսուսի նկատմամբ: Այս չէ՛ իրական հաւատքը: Իրական հաւատքը չի՛ լռեցներ գիտութիւնը կամ փոխարինէր զայն, այլ, ընդհակառակը՝ կը սնուի միտքի խոր համոզումներով, որոնք գիտութեան սանդուխներով կը բարձրանան դէպի աստուածային ճշմարտութիւնը, դէպի աստուածայայտնութիւն:

Հաւատքն է յայտնուած ճշմարտութիւններու ամբողջութիւնը: Անոր ուղին է ուղղափառութիւնը, իսկ գերագոյն նպատակը՝ սէրը, ամբողջ սիրտով, առ Աստված և սէր առ ընկերը:

Ահա թէ ինչու, երբ մարդս կը վստահի մեր Տիրոջ ու Անոր ուսուցումին մէջ կը գտնէ գերագոյն բացատրութիւնը գիտական բոլոր ուսուցումներուն, ան կրնայ ապրիլ հաւատքի այն կեանքով, որ իսկական քրիստոնէային կեանքն է, մարդկայինը, շաղախուած աստուածայինին:

Հաւատալու համար բաւարար չէ՛ ընդունիլ հաւատամքի մը վարդապետական բանաձևումները, այլ անհրաժեշտ է խոր ապրումի վերածել զանոնք, որովհետև հաւատքը վեր է աստուածաբանական գիտելիքներէն և վարդապետական բանաձևումներէ, այլ նոր կեանք մըն է ան, ծաղկած այդ բոլորի լայն դաշտին մէջ:

Գիտութեան ճամբով կրնանք տարուիլ եզրակացնելու թէ Աստուած գոյութիւն ունի, բայց հաւատքով, այսինքն կրօնական ապրումով միայն կրնանք զգալ և գիտակցիլ Աստուծոյ ներկայութեանը՝ մեր ամբողջ էութեան մէջ:

Հակադրութիւնը հաւատքին և գիտութեան, զոր մարդիկ կը ջանան ստեղծել, կեղծ հակադրութիւն մըն է, որովհետև առանց կանխակալ կարծիքի և ճշմարտութեան սիրոյն աշխատող գիտնականին համար, հաւատքը լոյս մըն է, որ չի՛ ժխտեր գիտութիւնը, այլ կ'ամբողջացնէ զայն:

Ուէ՛ ատեն, մեր Եկեղեցին չէ՛ ժխտած գիտութեան նպաստը հաւատքին, որովհետև անոր մէջ գտած է կարելի բացատրութիւններ՝ յայտնուած կրօնական ճշմարտութիւններուն: Ան տուած է մարդկային միտքին անոր արժանատի տեղը կրօնական հայեցողութեան մէջ, ո՛չ թէ անոր վրայ միայն հիմնելու համար հաւատքը, այլ բերելու համար զայն իբրև օժանդակ մեր հաւատքին:

Եկեղեցիի զաւակները նախ հաւատացած են Աստուծոյ և անկէ ետք միայն մարդկային գիտելիքներուն մէջ փնտրած են իրենց հաւատքը ամ-

բապնդող փաստեր, քանի որ հաւատքը, ամէն բանէ առաջ, վստահութեան և ներքին վկայութեան հարց է:

Նոյնն է և այսօր: Ամէն դար գիտական նոր վարկածներ և ըմբռնումներ կը բերէ: Անոնք բոլորը չե՛ն կրնար անցնիլ սահմանը ճիգերու, զորս մարդկային միտքը ըրած է միշտ, հասնելու համար ճշմարտութեան: Բայց անոնք կուգան ու կ'անցնին, մինչդէռ կրօնական ըմբռնումները կը մնան նոյն, բոլոր այն մարդոց մէջ, որոնք մտիկ կ'ընեն իրենց ներքին աշխարհէն եկող ձայնին՝ իրենց մէջ բնակող կենդանի Աստուծոյն:

Մարդու գիտակցութեան մէջ, հաւատքի կեանքին զարգացումը ունի իր հանգրուանները: Յաճախ, ան կը սկսի հոն ուր կանգ կ'առնէ գիտութիւնը: Հիւանդութեան մասնաւոր պարագան, յուսալքուած մարդուն մէջ, պերճախօս օրինակն է հաւատքի սկզբնաւորութեան:

Սակայն, երբ հաւատքը սկզբնաւորութիւն մըն է միայն, որ մարդկային գիտութենէն ձեռնբաժի՝ կը դիմէ Աստուծոյ գթութեան, անկէ սպասելով ինչ որ մարդիկ անկարող են տալու, այդպիսի հաւատքը չի՛ կրնար ըլլալ ամբողջական, ան ծնունդ է մասնաւոր պարագայի մը, ուր վախն ու երկիւղը անելի տեղ ունին քան գիտակից համոզումը:

Վստահիլ Աստուծոյ, յանձնուիլ Անոր մարդասիրութեան, Անկէ սպասել ամէն օգնութիւն, անշուշտ որ առաջին քայլերն են, բայց առաջին քայլեր միայն, որոնց անհրաժեշտօրէն պէտք է յաջորդեն ուրիշներ:

Բազմաթիւ քրիստոնեաներու հաւատքը եւս չի՛ գերազանցեր ժողովրդապետին հաւատքը. ան վստահութեան մղումն է դէպի Աստուած, ինչպէս պիտի մղուէինք մեր բժիշկէն անելի կարող բժշկի մը միջամտութեան, երբ մեր յոյսը կտրէինք մեր բժիշկէն:

Բայց ո՞րն է կատարեալ հաւատքը, որո՞նք են վստահութեան միւս քայլերը դէպի կենդանի հաւատք:

Հաւատալ բառը կը գործածենք երկու տարբեր առումներով. հաւատալ անձի մը և հաւատալ բանի մը: Առաջին առումով, հաւատքը վստահութիւն մըն է անձի մը գերբնական կարողութեան և զօրութեան: Երկրորդ առումով՝ խոր համոզումներու ամբողջութիւն մը, համոզումներ, սակայն, որոնք կը բղխին ներքին ապրումէ մը, ներքին վկայութենէ մը թէ հաղորդութեան մէջ ենք ճշմարտութեան հետ, ճշմարտութիւն մը, որուն աղբիւրն է Աստուած: Եկեղեցին հաւատքի առարկայ ճշմարտութիւնը կը կոչէ «յայտնութիւն»:

Այսօրուան իրականութեան մէջ կան մարդիկ, որոնք կը մերժեն հաւատալ ոնէ անձի կամ ուսուցումի: Անոնք իրենց վստահութիւնն ու ուսուցումը կը կեդրոնացնեն իրենց անձին վրայ, հակադրելով իրենց գիտութիւնը յայտնուած հաւատքին: Այդպիսիները չե՛ն մերժեր հաւատքի մը անհրաժեշտութիւնը, այլ կրօնական հաւատքին կը հակադրեն այլ հաւատք մը, աչն է հաւատք՝ մարդկային միտքի կարողութիւններուն, որոնցմէ կը սպա-

սենն ճշմարտութեան յայտնութիւնը։ Այդպիսիները գիտեն թէ մարդկային
միտքը հետո է թափանցած ըլլալէ տիեզերքի և մարդու խորհուրդներուն,
թէ՛ գիտութեան նոր գիտերու յայտնութիւնը եթէ կը փաստէ ո՞նէ բան, կը
փաստէ թէ նորը կը հերքէ հինը և, հետեւաբար, ինչ որ միամտութիւնը պի-
տի նկատուի վաղը, շնորհիւ առելի նոր նուաճումներու, չի՝ կրնար բացար-
ձակ ճշմարտութիւն ըլլալ այսօր։ Անոնք գիտեն գիտական աշխարհի ան-
որանալի այս օրէնքը, սակայն իրենց վստահութիւնը կ'ուզեն կապուած
պահել միայն ու միայն իրենց գիտութեան, պնդելով թէ պիտի գայ օր մը,
երբ գիտութիւնը պիտի բացատրէ ամէն բան և պէտք պիտի չմնայ դիմելու
կրօնքի բերած բացատրութիւններուն։

Այսպիսիներուն տրուած պատասխանը շատ պարզ է. առանց մտնելու վէճին մէջ, որ կասկածի տակ կ'առնէ մարդկային միտքին անսահմանութիւնը, եթէ ենթադրենք պահ մը, թէ պիտի գա՞ օր, երբ մարդկային հայեցողութեան առջեւ դրուած բոլոր հարցերը՝ բնութեան և մարդու, երկրաւոր կեանքի և յափտեմականութեան, մահուան և անմահութեան մասին պիտի գտնեն անվիճելի պատասխաններ, անվիճելի անշուշտ մարդկային միտքին և գիտելութեան անունով հաւատքը ժխտող գիտուններուն, այլ անոնց, որոնք գիտնական ըլլալով հանդերձ, գիտեն թէ իրենց գիտութենէն աւելի կատարեալ գիտութեան դաշտ մը կայ մարդու հոգիէն ներս, հաւատքով լուսաւորուած գիտութիւնը, որ կը կոչուի լոյս աստուածգիտութեան: Հո՛ն է ճշմարիտը, գեղեցիկը և բարին, հոն՝ իրական մարդը:

ՇԱՀԷ ԱՐՔԵՊՍ, ԱԾԷՄԵԱՆ

